



#### 149. ԽԵԼՔ ԳԼԽԻՆ ՊԱՌԱՎ

Ժամանակով դեկ գընկնա մըշ օխըըրին, կը տանն զպառավու էծ:  
Պառավն ի՛ գելնա չըմնօը կը կանի դեմ աղոթրան, կանիծե  
ղփաշեն.

— Ուը աչք քոռնա,— կըսե,— ուը յոտք կոտրի, ուը պնչերուց  
գա էն փարեն, օր թագավորից կառնե կը զխտի, զուը պատանք  
կարի:՞ տաս տակ թելով:

Ձեն կէրթա կը հասնի փաշին, փաշեն զպառավ կը կանչե ուը  
մոտ:

— Պառա՛վ,— կըսե,— գելն է զքու էծ տարի, ընձի յորի՞ն կա-  
նիծիս, հը՛:

— Հպա քըզի շանիծիմ, վի՞ն անիծիմ,— կըսե պառավ,— օր  
դու աղեկ փաշա էղենը՝ աղեկ խայմախամ կը ճամպեր մըզի, աղեկ  
խայմախամ աղեկ ռես կը գնեը, աղեկ ռես աղեկ հովիվ կը բռնեը,  
աղեկ հովիվ աղեկ շուն կը պահեը, աղեկ շուն չը թողեը զիմ օրով-  
ջորով էծ տանեը:

Փաշեն ըսկի չը կոնա ճոտուն էնե. պառավուն էրկու էծ կիտա,  
կը շամպե ուը տուն:

